ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» սեպտեմբերի 2022 թ. N 126-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 152-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով "

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի «Աջակցող միջոցներ տրամադրող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի որակավորման նպատակով հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու, որակավորման կարգը և պայմանները հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N 121-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 152-Ա/1 հրամանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՐԱՄԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ՝ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Աջակցող միջոց տրամադրելու համար իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություն) ընտրության և պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել մշտապես գործող որակավորման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել՝

1) կազմակերպությունների որակավորման կարգը և պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի.

2) կազմակերպությունների հետ կնքվող՝ աջակցող միջոցներ տրամադրելու մասին պայմանագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարին վերապահել՝

1) աջակցող միջոցների պետական հավաստագրերի, ինչպես նաև առանց պետական հավաստագրի տրամադրվող՝ աջակցող միջոցների տրամադրման նվազագույն պահանջների սահմանումը.

2) հանձնաժողովի համապատասխան եզրակացության հիման վրա որակավորված կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու գործընթացի իրականացումը:

Հավելված N 1
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
28 սեպտեմբերի -ի N - Ա/1 հրամանի

ԿԱԶՄ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Կեսոյան	- Հանձնաժողովի նախագահ (նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետի տեղակալ)
Ք. Մայիլյան	- Հանձնաժողովի անդամ (նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ)
Մ. Գրիգորյան	- Հանձնաժողովի անդամ (ՄՄԾ բժշկասոցիալական փորձաքննության և աջակցող միջոցներով ապահովման վարչության աջակցող միջոցներով ապահովման բաժնի պետ)
Մ. Մխիթարյան	- Հանձնաժողովի անդամ (նախարարության մոնիթորինգի և գնահատման բաժնի գլխավոր մասնագետ)
Ք. Ստեփանյան	- Հանձնաժողովի քարտուղար (նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի մասնագետ)

Հավելված N 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
29 սեպտեմբերի -ի N 32- Ա/Ն հրամանի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են աջակցող միջոց տրամադրող կազմակերպությունների որակավորման, կազմակերպությանը ներկայացվող պահանջների, աջակցող միջոցներ տրամադրելու մասին պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) կնքման հետ առնչվող հարաբերություններ:

2.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Որակավորման գործընթացն իրականացվում է սույն հրամանի N 1 հավելվածով հաստատված հանձնաժողովի կողմից:

3. Հանձնաժողովը ուսումնասիրում է կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը որակավորման համար ներկայացվող պահանջներին և տալիս եզրակացություն կազմակերպության որակավորված լինելու վերաբերյալ:

4. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովը նիստերը հրավիրվում են հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի նիստի մասին հանձնաժողովի անդամների իրազեկումն իրականացվում է հավասար հնարավորությունների ապահովման վարչության (այսուհետ՝ պատասխանատու ստորաբաժանում) կողմից նիստի գումարման մասին տեղեկատվությունը հանձնաժողովի նախագահի կողմից ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

5. Հանձնաժողովի նիստում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ընթացքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հանձնաժողովի անդամները կարող են քվեարկել միայն կողմ կամ դեմ: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը հանձնաժողովի մեկ անդամից

մյուսին չի թույլատրվում: Եթե քվեարկության արդյունքում հանձնաժողովի անդամների ձայները բաշխվում են հավասարաչափ, ապա հանձնաժողովի նախագահի ձայնը համարվում է որոշիչ:

6. Որակավորված կազմակերպությունը սահմանված կարգով նախարարության հետ կնքում է աջակցող միջոցների տրամադրման մասին պայմանագիր:

3.ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Աջակցող միջոց տրամադրելու համար կազմակերպությունը նախարարություն է ներկայացնում որակավորում անցնելու կամահայտնության վերաբերյալ նախարարություն հասցեագրած գրություն և սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը:

8. Որակավորման գործընթացին մասնակցելու կամահայտնության վերաբերյալ գրության հետ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում-հայտ՝ համաձայն Ձև 1-ի.

2) տեղեկանք-հայտարարագիր աջակցող միջոցների տրամադրման համար համապատասխան մասնագետ-խորհրդատուի, լսողական սարքերի դեպքում՝ լսողական սարքերի տեղադրման և հարմարեցման համար համապատասխան փորձառություն ունեցող մասնագետի, իսկ վերին և ստորին վերջույթի պրոթեզների (այդ թվում՝ օրթոպրոթեզներ) և օրթեզների պատրաստման և վերանորոգման համար առնվազն մեկ տարվա մասնագիտական փորձառություն ունեցող կամ մասնագիտական վերապատրաստում անցած մասնագետների առկայություն.

3) տեղեկանք-հայտարարագիր տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց սպասարկումն իրականացնելու համար մատչելի շենքային պայմաններ ունենալու վերաբերյալ, ներառյալ անարգել մուտք կազմակերպության շենք և սպասարկման սրահ՝ մուտքի զրոյական մակարդակ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմերին համապատասխան թեքահարթակ, իսկ դրանց անհնարինության դեպքում համապատասխան անվտանգ տեխնիկական սարքավորումներ՝ վերելակ, բարձրացնող մեխանիզմներ և սպասարկման սրահում տեղաշարժվելու համար խոչընդոտների բացակայություն.

4) տեղեկանք-հայտարարագիր այն մասին, որ կազմակերպությունն ունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ստանձնած պարտավորություններն առանց նախնավճարի

կատարելու համար, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցներ (համակարգչային տեխնիկա).

5) տեղեկատվություն նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հաստատված նվազագույն պահանջներին համապատասխանող աջակցող միջոցների վերաբերյալ (դրանց անվանումները, ապրանքանիշը, մոդելը, տեխնիկական նկարագրությունները, լուսանկարները, գները, ներկրվող աջակցող միջոցների և դրանց բաղկացուցիչ մասերի (պատրաստման նյութեր և դետալներ) համար միջազգային կամ միջպետական կամ եվրոպական ստանդարտների համապատասխանության հավաստագրի կամ հայտարարագրի պատճենը և այլ տեղեկատվություն)՝ համաձայն Ձև 2-ի.

6) վերին և ստորին վերջույթի պրոթեզների (այդ թվում՝ օրթոպրոթեզներ) և օրթեզների պատրաստման դեպքում նաև համապատասխան մասնագետներ ունենալու վերաբերյալ փաստը հավաստող փաստաթուղթ.

7) այլ տեղեկատվություն:

9. Սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը պետք է վավերացված լինեն կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ այլ իրավասու ներկայացուցչի ստորագրությամբ և կնիքով (կնիքի առկայության դեպքում) կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

10. Կազմակերպության կողմից սույն կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանող, ոչ հավաստի կամ թերի փաստաթղթեր կամ տեղեկատվություն ներկայացվելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է կազմակերպությանը, որը հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում շտկված փաստաթղթերը: Հինգ աշխատանքային օրվա ընթացքում շտկված փաստաթղթերը նախարարություն չներկայացնելու դեպքում, կազմակերպությունը պայմանագիր կնքելու համար կրկին կարող է դիմել երկու ամիս հետո:

11. Կազմակերպությունը կարող է ցանկացած ժամանակ դիմել և որակավորվելու դեպքում ներառվել որակավորված կազմակերպությունների ցանկում (այսուհետ՝ ցանկ):

12. Ցանկը նախարարության հասարակայնության հետ կապերի բաժինը հրապարակում է նախարարության պաշտոնական կայքէջում:

13. Ցանկում նշվում են որակավորված կազմակերպության անվանումը, կազմակերպության գործունեության վայրերի, այլ սպասարկման կետերի և

ներկայացուցչությունների տվյալները (հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ և այլն):

14. Ցանկում ներառված կազմակերպությունը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ ցանկից՝ իր գրավոր դիմումի համաձայն:

4.ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

15. Կազմակերպությունը պետք է բավարարի սույն կետով սահմանված հետևյալ պահանջներին՝

1) Երևանում գործելու դեպքում՝ ունի սպասարկման կետ կամ ներկայացուցչություն Երևան քաղաքին ոչ սահմանակից առնվազն մեկ մարզում.

2) ունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները առանց կանխավճարի կատարելու համար.

3) ունի աշխատանքային ռեսուրսներ՝ շահառուներին սպասարկելու և ծառայություն ստացած անձանց վերաբերյալ տվյալները «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար համապատասխան մասնագետ, վերին և ստորին վերջույթների պրոթեզների (այդ թվում՝ օրթոպրոթեզներ) և օրթեզների պատրաստման և վերին և ստորին վերջույթների պրոթեզների (այդ թվում՝ օրթոպրոթեզներ) ու ստորին վերջույթի հոդով օրթեզների վերանորոգման համար առնվազն մեկ տարվա մասնագիտական փորձառություն ունեցող կամ մասնագիտական վերապատրաստում անցած մասնագետների, լսողական սարք տրամադրող Կազմակերպությունները՝ նաև համապատասխան մասնագետ՝ շահառուի կարիքին համարժեք լսողական սարք տրամադրելու և տեղադրելու համար, իսկ այլ աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպությունները՝ շահառուի կարիքներին համապատասխան աջակցող միջոց տրամադրող խորհրդատու-աշխատակից.

4) ունի պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ (համակարգչային տեխնիկա) և մատչելի շենքային պայմաններ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց սպասարկումն իրականացնելու համար, ներառյալ անարգել մուտք կազմակերպության շենք և սպասարկման սրահ՝ մուտքի զրոյական մակարդակ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմերին համապատասխան կառուցված թեքահարթակ, իսկ դրանց անհնարինության դեպքում համապատասխան անվտանգ տեխնիկական

սարքավորումներ՝ վերելակ, բարձրացնող մեխանիզմներ և սպասարկման սրահում տեղաշարժվելու համար խոչընդոտների բացակայություն.

5) Կազմակերպության կողմից ներկրվող աջակցող միջոցները և դրանց բաղկացուցիչ մասերը (պատրաստման նյութեր և դետալներ) պետք է համապատասխանեն միջազգային կամ միջպետական կամ եվրոպական ստանդարտներին և ունենան այդ ստանդարտների համապատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր:

5.ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

16. Հանձնաժողովը դիմում-հայտերը և դրան կից փաստաթղթերն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, բացում, գնահատում և որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերի հիման վրա տալիս է եզրակացություն կազմակերպության որակավորված լինելու կամ որակավորում չանցնելու մասին:

17. Որակավորված է համարվում այն կազմակերպությունը, որը ներկայացրել է սույն կարգի 8-րդ կետով սահմանված փաստաթղթերը և բավարարում է սույն կարգի 15-րդ կետով սահմանված պահանջներին:

18. Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման օրը, ամիսը, տարին.

2) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անուն-ազգանունները.

3) որակավորման գործընթացին մասնակցելու դիմում-հայտ ներկայացրած կազմակերպությունների անունները.

4) որակավորված կազմակերպության անվանումը.

5) որակավորում չանցած կազմակերպության անվանումը և որակավորում չանցնելու պատճառները.

6) այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

19. Արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից: Այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամներից մեկը դիմում-հայտերի կամ դրանց կից փաստաթղթերի գնահատման և ամփոփման վերաբերյալ ունենում է հատուկ կարծիք, ապա այն ներկայացվում է գրավոր, որը կցվում է նիստի արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

20. Կազմակերպության որակավորված լինելու վերաբերյալ տրված եզրակացությունը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է

նախարարության գլխավոր քարտուղարին՝ պայմանագիր կնքելու հետագա գործընթացը կազմակերպելու նպատակով:

21. Որակավորման գործընթացին դիմում-հայտ ներկայացրած կազմակերպությունները (նրանց ներկայացուցիչները) կարող են ներկա գտնվել դիմում-հայտերի բացման և գնահատման նիստերին, ծանոթանալ նիստերի արձանագրություններին: Ցանկության դեպքում նիստերի արձանագրությունները դիմում-հայտ ներկայացրած կազմակերպություններին կարող են տրամադրվել համապատասխան գրավոր դիմումը նախարարություն ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

22. Կազմակերպության որակավորված լինելու կամ որակավորում չանցնելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումն այդ մասին գրավոր տեղեկացնում է կազմակերպությանը:

23.Որակավորված լինելու մասին տեղեկատվությունն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունն նախարարությանը գրավոր տեղեկացնում է պայմանագիր կնքելու վերաբերյալ իր պատրաստակամության մասին: Պայմանագիր կնքելու վերաբերյալ կազմակերպության պատրաստակամության մասին տեղեկատվությունը ստանալուց հետո նախարարության գնումների համակարգման բաժինը երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանն է ներկայացնում պայմանագրի նախագիծը:

24.Որակավորված կազմակերպության և նախարարության միջև կնքվում է աջակցող միջոց(ներ) տրամադրելու մասին պայմանագիր՝ համաձայն սույն հրամանի N 3 հավելվածի:

25.Որակավորված կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում նախարարության գնումների համակարգման բաժինը տեղեկացնում է պատասխանատու ստորաբաժանմանը:

26.Որակավորված կազմակերպության գործունեության վայրերի, այլ սպասարկման կետերի և ներկայացուցչությունների տվյալները (հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ և այլն), ինչպես նաև աջակցող միջոցների տեսականու և այլ տեղեկատվության

փոփոխելու դեպքում կազմակերպությունը՝ համաձայն Ձև 2-ի եռօրյա ժամկետում տեղեկացնում է պատասխանատու ստորաբաժանմանը:

27. Վերին և ստորին վերջույթների պրոթեզների (այդ թվում՝ օրթոպրոթեզներ) և (կամ) օրթեզների տրամադրման համար արդեն իսկ որակավորված կազմակերպությունները վերին և ստորին վերջույթների նորանվամբ պրոթեզներ (այդ թվում՝ օրթոպրոթեզներ) և (կամ) օրթեզներ տրամադրելու նպատակով որակավորման գործընթացով չեն անցնում: Այս դեպքում նրանք նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն այդ մասին՝ համաձայն Ձև 2-ի, որի հիմքով էլ նախարարության գնումների համակարգման բաժինը կնքում է համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր:

28. Որակավորված կազմակերպությունը տվյալ աջակցող միջոցի նոր տեսակ ավելացնելու դեպքում նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն՝ համաձայն Ձև 2-ի, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար:

29. Որակավորման արդյունքները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձև 1

Դ Ի Մ Ո Ւ Մ - Հ Ա Յ Տ

Աջակցող միջոց(ներ) տրամադրելու գործունեության որակավորման

1._____

Կազմակերպության անվանումը

2. _____

Կազմակերպության պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

3. _____

_____

Կազմակերպության իրավաբանական հասցե և կապի միջոցները (հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ նաև էլեկտրոնային հասցեն և ֆաքսը)

4.

	Տրամադրվող աջակցող միջո(ներ)ի անվանում(ներ)ը (համաձայն նախարարության կողմից հաստատված աջակցող միջոցի անվանման)	Կազմակերպության գործունեության հասցեն Երևանում (ներառյալ հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ ֆեյսբուքյան հասցե և (կամ) կայքէջ և (կամ) էլեկտրոնային հասցեն)	Կազմակերպության գործունեության հասցեն ՀՀ մարզում (ներառյալ հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ ֆեյսբուքյան հասցե և (կամ) կայքէջ և (կամ) էլեկտրոնային հասցեն)	Կազմակերպության գործունեության այլ հասցեներ (ներառյալ հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ ֆեյսբուքյան հասցե և (կամ) կայքէջ և (կամ) էլեկտրոնային հասցեն)
1.		1.	1.	1. 2.
2.				
...				

5. Ներկայացվող այլ փաստաթղթերը՝

1)_____

2)_____

3)_____

4)_____

5)_____

6)_____

7)_____

4. Այլ տեղեկատվություն_____

_____

Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար՝

_____

պաշտոնը, անունը, ազգանունը

_____

ստորագրությունը

Կ.Տ.

«_____» «_____» 20 թ.

Ձև 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Որակավորված կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցող միջոցների վերաբերյալ

_____

Կազմակերպության անվանումը

	Աջակցող միջոցի անվանումը (համաձայն նախարարության կողմից հաստատված աջակցող միջոցի անվանման)	Ապրանքանիշը, մոդելը կամ կոդը	Տեխնիկական նկարագրությունը և լուսանկարը	Քանակ (հատ/զույգ)	Գինը	Տրամադրման վայրի հասցեն և հեռախոսահամար, (ներառյալ հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ ֆեյսբուքյան հասցե և (կամ) կայքէջ և (կամ) էլեկտրոնային հասցեն)	Համապատասխանության հավաստագիրը կամ հայտարարագրի լուսանկարը կամ սկանավորված տարբերակը (ներկրվող ապրանքների և (կամ) դրանց նյութերի, դետալների համար)	Այլ տեղեկատվություն
1								
2								
3								
...								

Ծանոթություն – Լուսանկարները կարող է ներկայացվել առանձին ֆայլով՝ հղում անելով ձևում նշված հերթական համարին, ապրանքանիշին, մոդելին կամ կոդին և գնին

Հավելված N 3
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
28 սեպտեմբերի -ի N 28 - Ա/Ղ հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» «_____» 20__ թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս՝ գլխավոր քարտուղար _____, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա մի կողմից, և _____(այսուհետ 'Կատարող),
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
ի դեմս_____,
(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)
որը գործում է_____հիման
(կանոնադրության, լիազորագրի կամ այլն)
վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպությունների որակավորման նպատակով 20__թ. «_____» «_____» -ին կայացած ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 20 թ. «_____»«_____» N _____ հրամանով (այսուհետ՝ Հրաման) ստեղծված որակավորման հանձնաժողովի տրված եզրակացությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասի.:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԴՐԱ ԳՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1.1. Կատարողը Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցում է Պայմանագրում նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն վճարում է այդ Ծառայությունների դիմաց աջակցող միջոցի ձեռք բերման արժեքը՝ Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

1.2. Կատարողի կողմից արտերկրից ներկրվող աջակցող միջոցները և դրա պատրաստման նյութերը (մասերը և դետալները) պետք է համապատասխանեն միջազգային կամ միջպետական կամ եվրոպական ստանդարտներին և ունենան այդ ստանդարտների համապատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր (այսուհետ՝ Համապատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր):

1.3. Պատվիրատուի համար ընդունելի է համարվում այն Համապատասխանության հավաստագիրը կամ հայտարարագիրը, որը ճանաչված է ԱՊՀ երկրներում, կամ դրան կից Կատարողը ներկայացրել է փորձարկում անցնելու վերաբերյալ արձանագրություն կամ Կատարողի կողմից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կողմից տրված միջազգային կամ միջպետական կամ եվրոպական ստանդարտներին համապատասխանելու վերաբերյալ համապատասխան հավաստագիր կամ հայտարարագիր:

1.4. Կատարողը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում, Պետական հավաստագրում նշված կամ աջակցող միջոց ստանալու իրավունք ունեցող շահառուին

(այսուհետ՝ Շահառու) տրամադրում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված նվազագույն պահանջներին (այսուհետ՝ Նվազագույն պահանջներ) և Պայմանագրի 1.2 և 1.3 կետերի պահանջներին համապատասխանող, ինչպես նաև Հրամանով հաստատված N 2 հավելվածի Ձև 2-ով (այսուհետև՝ Ձև 2) սահմանված ձևաչափով Պատվիրատուին ներկայացված աջակցող միջոց:

1.5. Կատարողը կարող է Շահառուի ցանկությամբ, նրան տրամադրել Պայմանագրով նախատեսված Նվազագույն պահանջներից տարբերվող՝ ավելի որակյալ (գնային արժեքով ավելի բարձր կամ Նվազագույն պահանջները գերազանցող) աջակցող միջոց: Եթե Շահառուի անհատական կարիքներին համապատասխանող՝ Պայմանագրով նախատեսված Նվազագույն պահանջներից տարբերվող՝ ավելի որակյալ աջակցող միջոցի գինը բարձր է դրա համար փոխհատուցվող գումարից, ապա Շահառուն իր ցանկությամբ այն կարող է ձեռք բերել գների տարբերությունը վճարելու դեպքում:

1.6. Եթե Շահառուն նախընտրում է ձեռք բերել աջակցող միջոցի փոխհատուցման համար նախատեսված գնից ավելի էժան աջակցող միջոց, որը չի տարբերվում Պայմանագրով նախատեսված Նվազագույն պահանջներից և համապատասխանում է նրա անհատական կարիքներին, ապա կարող է ավելացած գնային արժեքի սահմաններում նույն կազմակերպությունից ձեռք բերել այլ պահեստամասեր կամ հարակից պարագաներ (լրացուցիչ անիվներ, ոտնակներ, հակախոցային բարձիկներ, մարտկոցներ և այլն), որոնք օգտագործվում են աջակցող միջոցի ֆունկցիոնալությունը, երկարակեցությունը կամ հարմարավետությունն ապահովելու համար:

1.7. Եթե աջակցող միջոցի փաստացի գինը ավելի ցածր է դրա համար նախատեսված փոխհատուցման գնից, ապա Պատվիրատուն տրամադրված աջակցող միջոցի դիմաց փոխհատուցում է փաստացի գնին համապատասխան: Պայմանագրի շրջանակներում Շահառուին տրամադրվող աջակցող միջոցի փաստացի գնի հաշվարկի պատասխանատվությունը կրում է Կատարողը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Ծառայությունների մատուցման ընթացքը և աջակցող միջոցի որակը, Կատարողից ստանալ օրենքով չարգելված ցանկացած տեղեկատվություն Ծառայությունների ընթացքի վերաբերյալ՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Կատարողի կողմից Նվազագույն պահանջներին չհամապատասխանող աջակցող միջոց տրամադրելու դեպքում՝

ա. չընդունել աջակցող միջոցի տրամադրման վերաբերյալ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված հանձնման-ընդունման արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն)՝ սահմանելով ոչ պատշաճ որակի աջակցող միջոցը Պայմանագրի Նվազագույն պահանջներին համապատասխանող աջակցող միջոցով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ (ողջամիտ ժամկետը չի կարող գերազանցել 21 օրը)՝ կիրառելով Պայմանագրի 5.2 կետով սահմանված տույժը.

բ. հետ գանձել Պայմանագրի Նվազագույն պահանջներին չհամապատասխանող յուրաքանչյուր տրամադրված աջակցող միջոցի համար վճարված գումարն ամբողջությամբ, եթե Կատարողը հրաժարվում է ողջամիտ ժամկետում անհատույց փոխարինել ոչ պատշաճ որակի կամ Նվազագույն պահանջներին չհամապատասխանող աջակցող միջոցը Պայմանագրի Նվազագույն պահանջներին համապատասխանող աջակցող միջոցով.

գ. հետ գանձել տրամադրված աջակցող միջոցի համար վճարված գումարն ամբողջությամբ, եթե ողջամիտ ժամկետում անհատույց փոխարինված աջակցող միջոցը ոչ պատշաճ որակի է կամ չի հանդիսանում սույն պայմանագրի 2.4.2 կետով սահմանված աջակցող միջոց:

2.1.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Կատարողը հրաժարվել է ողջամիտ ժամկետում անհատույց փոխարինել ոչ պատշաճ որակի աջակցող միջոցը Պայմանագրի Նվազագույն պահանջներին համապատասխանող աջակցող միջոցով.

բ. Կատարողը ներկայացված հիմնավորումների հիման վրա ստանձնելով պարտավորություն՝ ողջամիտ ժամկետում անհատույց չի փոխարինել ոչ պատշաճ որակի աջակցող միջոցը Պայմանագրի Նվազագույն պահանջներրին համապատասխանող աջակցող միջոցով.

գ. Կատարողի կողմից տրամադրված ոչ պատշաճ որակի աջակցող միջոցը առողջական վնաս է հասցրել շահառուին.

դ. եթե առկա են Պայմանագրի 7.4 կետով սահմանված դեպքերը

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. ընդունել հաշվետու ամսում Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների մասին հաշվետվությունները (թղթային կամ էլեկտրոնային եղանակով)՝ համաձայն 3.1 կետով պահանջվող փաստաթղթերի, իսկ դրանցում անհապատասխանություններ կամ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2. հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողի կողմից 2.2.1 կետով ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ և թերություններ չգտնելու դեպքում՝ ընդունելի համարել մատուցված Ծառայությունների արդյունքը և Կատարողին տրամադրել իր կողմից ստորագրված Արձանագրության մեկ օրինակ.

2.2.3. մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելի համարելու դեպքում, Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցել ընդունված հաշվետվություններով նախատեսված գումարը, իսկ տուգանքների առկայության դեպքում՝ դրանք հաշվարկել Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել մատուցված Ծառայությունների դիմաց փոխհատուցման ենթակա գումարը վճարել Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում.

2.3.2. Պատվիրատուից պահանջել չմիջամտելու Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակներում իրականացվող գործունեությանը.

2.3.3. Ցանկացած պահի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և դուրս գալ որակավորված Կազմակերպությունների ցանկից, եթե տվյալ պահին Պատվիրատուի նկատմամբ ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կատարված են:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. աջակցող միջոցը Շահառուին տրամադրել Նվազագույն պահանջներին համապատասխան, ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգի և պայմանների համաձայն: Կազմակերպությունը պարտավոր է ունենալ մշտապես պետական հավաստագրով սահմանված գնին համարժեք աջակցող միջոցներ:

2.4.2. աջակցող միջոցը Շահառուին տրամադրել նրա անհատական կարիքներին համապատասխան.

2.4.3. աջակցող միջոցը Շահառուին տրամադրել՝ Շահառուի կարիքներին վերջնականապես հարմարեցնելուց և նրա գրավոր համաձայնությունը ստանալուց հետո.

2.4.4. Շահառուին սպասարկել պատշաճ մակարդակով, սովորեցնել աջակցող միջոցը օգտագործելու ձևը.

2.4.5. Պատվիրատուին տրամադրել տեղեկատվություն իր գործունեության վայրի, այլ սպասարկման կետերի և ներկայացուցչությունների վերաբերյալ (հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ և այլն): Իր գործունեության վայրի, այլ սպասարկման կետերի և ներկայացուցչությունների վերաբերյալ տեղեկատվության (հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ և այլն) փոփոխման դեպքում այդ մասին եռօրյա ժամկետում հայտնել Պատվիրատուին.

2.4.6. Պատվիրատուին ներկայացնել տրամադրվող աջակցող միջոցի տեխնիկական նկարագրությունները, լուսանկարները, գները և այլ տեղեկատվություն, ինչպես նաև տրամադրվող աջակցող միջոցների տեսականու, դրանց տեխնիկական նկարագրությունների, լուսանկարների, գների և այլ տեղեկատվության փոփոխության դեպքում եռօրյա ժամկետում ներկայացնել Պատվիրատուին՝ Ձև 2-ով սահմանված ձևաչափով.

2.4.7. Ողջամիտ ժամկետում անհատույց փոխարինել ոչ պատշաճ որակի աջակցող միջոցը Պայմանագրի Նվազագույն պահանջներին համապատասխանող աջակցող միջոցով.

2.4.8. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2, 5.3, 5.4 կետերով նախատեսված տույժերն ու տուգանքները.

2.4.9. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.4.10. Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

2.4.11. չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Շահառուների վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունները և տվյալները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուի կողմից Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի կողմից երկկողմ ստորագրված և կնքված Արձանագրությունով: Կատարողը, մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, Պատվիրատուին է ներկայացնում նախորդ ամսում Շահառուներին տրամադրված աջակցող միջոցի մասին իր կողմից ստորագրված Արձանագրության 2 օրինակ, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգից արտածած ամփոփ հաշվետվությունը, հաշիվ-ապրանքագիրը (2 օրինակ):

3.2. Պատվիրատուի կողմից Արձանագրությունը ստորագրվում է, եթե Շահառուին տրամադրված աջակցող միջոցը համապատասխանում է Պայմանագրի 2.2.2 կետի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված համապատասխան միջոցները:

3.3. Պատվիրատուն Արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Արձանագրության մեկ օրինակը կամ աջակցող միջոցի տրամադրման արդյունքը չընդունելու մասին պատճառաբանված մերժումը:

4. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Աջակցող միջոցի ձեռքբերման արժեքը սահմանվում է պետական բյուջեով աջակցող միջոցների ձեռքբերման համար նախատեսված միջոցների շրջանակներում, իսկ պետական

հավաստագրի մեկ միավորի գնային արժեքը որոշվում է Նախարարի համապատասխան հրամաններով: Պետական հավաստագրի արժեքը ներառում է նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, հարկերն ու տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2.Աջակցող միջոցի ձեռքբերման արժեքի փոփոխության դեպքում Պատվիրատուն այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է Կատարողին:

4.3. Պատվիրատուն՝ Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ ստորագրված Արձանագրության հիման վրա՝ փոխհատուցման համար նախատեսված ամսում՝ 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված միջոցների չափից: Եթե մատուցված Ծառայությունների դիմաց փոխհատուցելու համար տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա փոխհատուցումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրով չնախատեսված դեպքերում, կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.2. Տրամադրված յուրաքանչյուր ոչ պատշաճ որակի աջակցող միջոցի տրամադրման օրվանից հաշվարկվում է տույժ՝ աջակցող միջոցի ձեռքբերման արժեքի 1%-ի չափով յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև դրա փոխարինումը Պայմանագրի Նվազագույն պահանջներին համապատասխանող աջակցող միջոցով:

5.3. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.3 կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում Կատարողը վճարում է տուժանք՝ աջակցող միջոցի ձեռքբերման արժեքի կրկնապատիկի չափով:

5.4. Չմատուցված ծառայությունների վերաբերյալ կամ 2.4.3 կետով նախատեսված պահանջները կատարված չլինելու դեպքում Արձանագրություն ներկայացնելու կամ Պատվիրատուին Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դեպքերի մասին ակնհայտ կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքում, բացի օրենսդրությամբ սահմանված դեպքերից, Կատարողից գանձվում է տուգանք տվյալ աջակցող միջոցի ձեռքբերման հարյուրապատիկի չափով:

5.5. Պայմանագրով սահմանված տույժերը հաշվարկվում և հաշվանցվում են աջակցող միջոցի տրամադրման արդյունքում Կատարողին փոխհատուցման ենթակա գումարներից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տուգանքի կամ տուժանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելու պարտականությունից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո,

և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ընդունված իրավական ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

7.2. Պայմանագիրը կնքվում է անժամկետ:

7.3. Կատարողը կարող է լուծել պայմանագիրը, եթե մարված են պայմանագրով նախատեսված պարտավորությունները, կամ եթե այդ պարտավորությունները Կատարողը, օրենսդրությամբ սահմանված կարգով, փոխանցել է այլ կազմակերպության, որը հանդիսանում է Պատվիրատուի կողմից որակավորված աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպություն:

7.4. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ աջակցող միջոցների տրամադրման գործընթացում, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ որակավորման ընթացակարգի արդյունքում Կատարողին որակավորված ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների (այդ թվում բաց թողնված օգուտի) ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները:

7.5. Պայմանագիրը միակողմանի լուծվելու դեպքում Կատարողը կարող է Պատվիրատուի հետ նոր Պայմանագիր կնքել ոչ շուտ, քան մեկ տարի լրանալուց հետո:

7.6. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

7.7. Պայմանագիրը կարող է լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.8. Պայմանագրի գործողության ժամկետը դադարում է, եթե Պատվիրատուի մոտ վերացել է Աջակցող միջոցներ որակավորված կազմակերպությունների միջոցով տրամադրելու անհրաժեշտությունը: Այս մասին Պատվիրատուն անհապաղ տեղեկացնում է Կատարողին:

7.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.10. Երրորդ անձանց նկատմամբ Պայմանագրի կողմերի պարտավորությունները, ներառյալ՝ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման առարկայից և

չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման համար պատասխանատվությունը կրում է Կատարողը:

7.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12. Պայմանագրի հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

7.13. Պայմանագիրը և դրա հավելվածները կազմված են ---- էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.14. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.15. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Անվանումը՝	Անվանումը՝
Հասցեն՝	Հասցեն՝
Բանկի անվանումը՝	Բանկի անվանումը՝
ՀՀ	ՀՀ
ՀՎՀՀ	ՀՎՀՀ
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
.....	.....
Կ.Տ. (ստորագրություն)	Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված N 1
«_____» «_____» 20__ թ.
N «_____» պայմանագրի

ՆՎԱՀԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Ստորև բերված աջակցող միջոցների նվազագույն պահանջները կիրառվում են պետական բյուջեի շրջանակում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պետական հավաստագրերի հիման վրա աջակցող միջոցների տրամադրման նկատմամբ:

Վերոնշյալ ծառայությունների հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշումով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման համաձայն աջակցող միջոց ստանալու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) տրամադրվում են հետևյալ տեսակի աջակցող միջոցները.

Հ/Հ	ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ
	ՊՐՈԹԵԶՆԵՐ
	ՕՐԹԵԶՆԵՐ
	ԱՋԱԿՑՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր աջակցող միջոցի Նվազագույն պահանջները՝ առանձին-առանձին՝ ըստ վերը նշված ցուցակում ներկայացված համարակալման.

Հավելված N 2
«_____» «_____» 20__ թ.
N «_____» պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «_____» 20__թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20__թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N ___եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների				
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը	կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/
			փաստացի	փաստացի	

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ. »

9/28/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ